

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ԲԼԺԻՆ՝

ՔԱՂԱՌԱԾՔ ՍԻՆՈՂԻ ՕՐԱԳՐԱԹԻԲՆԵՐԻՅ՝

17 յուլ. Սինոզը շրջաբերական հրամանով պատուիրում է Հայոց Կոնսիստորիաներին՝ ըստ կանոնի ս. Աթմանասի Գլ. Ժ. 5 մատուցանել ս. պատարագ անձնասպանների վերայ և թաղել նոցա եկեղեցական կարգով, եթէ միայն բժշկական քննութեամբ ի յայտ գայ՝ որ անձնասպանը ոճիր գործելու ժամանակ եղել է խելայեղ վիճակի մէջ:

29 յուլ. Սինոզը պատուիրում է Տրի-խիսի Կոնսիստորիային թողնել Ղեռնդ քահանայ Սարգսեանցին միաբան և կատարող հոգեւոր պիտոյից Ժիրանաւորի ս. Աստուածածին եկեղեցւոյ՝ տալով նորան ամսական 15 ա. իսկ Ներսիսեան Դպրանոցի հոգաբարձութեանը թոյլ տալ կարգել իր կողմից ներկայացուցիչ հսկելու ու խտաանելու արդիւնքի վերայ: Մինչև Սինոզի նոր անօրէնութիւնը: Ապա Ղեռնդ քահանայի անվայել արարմանց համար նշանակել քննիչ և հետեանքը զեկուցանել Սինոզին:

29 յուլ. Սինոզը պատուիրում է Արցախի թեմի Կոնսիստորիային ցոյց տալ Նլխաւեստապոլի նահանգական դատարանի նախագահին, վերջնայ խնդրանայ համաձայն, նոյն թեմի վանքերից մի յարմարը որանդ պիտի ապաշխարեն անշափահաս յանցաւորները:

31 յուլ. Սինոզը ըստ միջնորդութեան Աստրախանի թեմի Առաջնորդի՝ խնդրում է Ներքին գործոց նախարարութեան, թոյլ տալ նորան հոգաւոր Սիրիւիայում բնակուող հայ լուսաւորչականաց հոգեւոր պաշտօնականները:

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԼԺԻՆ

ԸՆԱՊԵԿԸՆ և ԸՆԿՈՂՈՊՏԵԼԻ ԳԱՆՁԸ:

«Մի գանձեք մեզ գանձս յերկրի, որ ցեղ և ուսի՞մ ապականեն, և ուր զոյ՞ ահա՞ն հասանեն և զոյ՞ անու, այլ գանձեցե՛ք մեզ գանձս յերկինս, որ ո՞չ ցեղ և ո՞չ ուսի՞մ ապականեն, և ո՞չ զոյ՞ ահա՞ն հասանեն և զոյ՞ անու, զի ուր գանձեք մեր են, ահա և սիրտ մեր լիցին»:

Մատ. 2. 19—21:

ԱՐՅՆԷ թող ուրեմն ամէն ոք ինքն իրեն՝ ո՞ւր է իմ սիրտը, և պարզ կլինի այն ժամանակ նորա համար, թէ ինչպիսի գանձեր է ժողովել և ինչ չափով: Իսկ եթէ կամենում ենք մի ամբողջ ժողովուրդի հարստութեան տեսակը և չափը որոշել՝ հարցնենք, ո՞ւր է նորա երիտասարդ, յառաջադէմ առաւելագէտ սրտի մղումներով զեկափարուող դասի սիրտը:—Խեղճ է և ոգորմելի հարկաւ այն անհատը կամ ժողովուրդը, որի մէջ թմրած է իսպառ գանձեր ժողովելու և իւր կեանքը ճոխացնելու ցանկութիւնը, այդ ցանկութիւնը բնական է բոլոր մարդոց համար, և առանց նորան մենք վայրի կենդանիների կամ թռչունների վիճակի մէջ կլինե՞ինք, զիտութեան և արուեստի արտադրած մեծամեծ բարիքներից զուրկ՝ ազգատ հոգեպէս և մարմնապէս, Հայ ժողովուրդի մասին չի կարելի ասել, թէ նա թմրած ու ծոյլ ժողովուրդ է, յառաջ նետուելու, քրտինքի գնով է թէ մաքի հրնարագիտութեամբ՝ հարստութիւններ ժողովելու ձգտումը նոյնչափ զօրեղ է նորա մէջ, որչափ և որ և է քաղաքակրթութեամբ ազդի մէջ. հարց է միայն, թէ ինչպիսի ուղղութիւն է ստանում այդ ձգտումը մեր ներկայ դարում՝ ո՞ւր է մեր երիտասարդ սերունդի